

ՊԱՏՄՈՒԱԾՔ

ՄԱՆԿԱՆ ՄԵ ԵՐԱՋԸ ԱՍՏԴԻ ՄԵ ՎՐԱՅ

Կար ու չկար տղեկ մը կար, որ շատ կը չըր-
ջագայէր. ու կը խորհէր շատ մը բաներու վրայ,
Քոյր մը ունէր որ նոյնպէս մանուկ մըն էր, և իր
մնայուն ընկերը: Անոնք կ'սքանչանային ծաղիկ-
ներու գեղեցկութեան, կ'սքանչանային երկնքի
բարձրութեան և կապուտութեան, կ'սքանչանա-
յին ջուրերու խորութեան, կ'սքանչանային Աս-
տուծոյ կարողութեան և բարութեան, որ դա-
նոնք ստեղծած էր այնքան սիրուն:

Երբեմն իրարու կ'ըսէին. ենթադրելով որ բո-
լոր մանուկները երկրի վրայ մեռնէին, ծաղիկ-
ները, ջուրը, և երկինքը պիտի տխրէին: Անոնք
կը հաւատային թէ պիտի տխրէին: Վասնզի,
կ'ըսէին անոնք, բողբոջները ծաղիկներու մա-
նուկներ են, և փոքրիկ խաղասէր վտակները ու-
րոնք ցատկոտելով վար կ'իջնեն բլրակողերէն,
ջուրին դաւակներն են, և ամենափոքրիկ փա-
լիւլուն շողերն իսկ, որոնք պահուողութեան կը խա-
ղան ամբողջ գիշեր, անշուշտ մանուկներն են
աստղերուն. և անոնք բոլորն ալ պիտի վշտա-
նային եթէ տեսնէին թէ իրենց խաղընկերները,
մարդոց մանուկները ոչ ևս են:

Միակ շողջողուն ու ջինջ աստղ մը կար որ
կուգար և կ'երևէր երկնքի մէջ միւս բոլորէն ա-
ռաջ, եկեղեցւոյ սրածայր դանգակատան ծայրին
մօտիկ, դամբարաններուն վերեւ: Անոնք կը խոր-
հէին որ այդ աստղը աւելի մեծ և աւելի գեղե-
ցիկ էր, քան բոլոր միւսները, և ամէն գիշեր
կ'սպասէին դիտելու դայն ձեռք ձեռքի կանգ-
նած պատուհանի մը մէջ: Ով որ առաջին անգամ
նշմարէր դայն կը գոչէր «կը տեսնեմ աստղը»:
Եւ յետոյ երկուքը միասին կ'աղաղակէին, շատ
լաւ գիտնալով թէ երբ պիտի ելլեր ան և ուր-
տեղ: Այնպէս որ անոնք կամաց կամաց այնքան
բարեկամացան անոր որ անկողին մտնելէ առաջ
միշտ դուրս կը նայէին անգամ մը գիշեր բարի
ըսելու համար անոր, ու երբ դառնային քնանա-
լու կ'ըսէին «Աստուած օրհնէ աստղը»:

Բայց մինչ նա մանկուհեակ էր տակաւին, ո՞չ
շատ մանկատի քոյրը թառամեցաւ և ընկճուե-
ցաւ տակաւ առ տակաւ այնքան որ անկարող էր
աւելի երկար կենալ պատուհանին մէջ գիշերը,
և ապա տղեկը դուրս կը նայէր մեղմաղծիկ միս-
մինակ, և երբ ան տեսնէր աստղը կը դառնար
և կ'ըսէր անկողնոյն վրայ գտնուող զալկաղէմ
հիւանդին «կը տեսնեմ աստղը» և այդ պահուն
ժպիտ մը կուգար երեսին վրայ և պղտիկ ձայնիկ մը
կ'ըսէր «Աստուած օրհնէ իմ եղբայրը և Աստղը»:

Եւ այսպէս եկան ատեն, և ան ալ շատ չուտ,
երբ տղեկը դուրս կը նայէր միսմինակ, և երբ
ղէմը մը չկար անկողնին վրայ, և երբ միայն հո-
ղակոյտ մը կար հողակոյտերուն մէջ, որ առաջ հոն
չէր, և երբ աստղը կ'երկարէ ճառագայթները
ան կը տեսնէր դայն իր արցունքներուն մէջէն:

Հիմա այս ճառագայթները այնքան պայծառ
էին, և կարծես թէ կը շինէին այնպիսի փալ-
լիւլուն ճամբայ մը երկրէն դէպի երկինք, որ երբ
տղեկը գնաց իր մենաւոր անկողինը երազեց
աստղին մասին. և կ'երազէր թէ այն տեղը ուր
ինք պառկած էր կը տեսնէր մարդոց կարաւան
մը, որոնք վեր կը տարուէին պսպուռն պողո-
տայէն հրեշտակներու կողմէ, և աստղը բացուե-
լով, կը ցուցնէր անոր մեծ աշխարհ մը լոյսի
ուր շատ աւելի այսպէս հրեշտակներ կ'սպասէին
զանոնք ընդունելու:

Բոլոր այս հրեշտակները որոնք կ'սպասէին,
զարձուցին իրենց շողարձակ աչքերը ժողովրդին
վրայ, որոնք վեր կը տարուէին աստղին մէջ, ու
մանք դուրս եկան այն երկար շարքերէն որոնց
մէջ որ կը կենային և ինկան մարդոց պարանոց-
ներուն վրայ, և համբուրեցին զանոնք քնքշու-
թեամբ և հեռացան անոնց հետ լոյսի պողոտա-
ներէն վար, և այնքան ուրախ էին իրենց ընկե-
րութեամբը որ իր անկողնին մէջ պառկած տղեկը
կուլար ուրախութենէն:

Բայց կային բազմաթիւ հրեշտակներ որոնք
անոնց հետ միասին չգացին և անոնցմէ մէկը ան
ճանչցաւ: Հիւանդագին ղէմքը որ երբեմն տա-
րածուած էր անկողնին վրայ փառաւորուած էր
և կը ճառագայթէր, բայց իր սիրտը դուռ քոյրը
երկնքի բազմութեանց մէջ:

Քրոջ հրեշտակը կը տնտնար աստղին մօտ-
քին մօտը, և ըսաւ ժողովուրդը մինչև հոն բե-
րող առաջնորդին:

«Եղբայրս եկա՞ծ է»:

Եւ ան ըսաւ «Ո՛չ»:

Նա յուսալից ետ կը դառնար երբ որ տղեկը
երկարեց իր բազմութեան և աղաղակեց «Օ՛ր քոյր
իմ, ես հոս եմ, առ տար դիս»:

Եւ ապա աղջիկը
զարձուց իր շողջողուն աչքերը անոր վրայ. —
Գիշեր էր, աստղը կը փայլէր սենեակին մէջ, յօ-
րինելով երկար ճաճանչներ վար դէպի իրեն ինչ-
պէս որ կը տեսնէր իր արցունքներուն մէջէն:

Այդ ժամէն սկսեալ մանուկը կը նայէր աստ-
ղին իրիւ այն տունը՝ ուր ան պիտի երթար երբ
իր ժամանակը հասնէր, և խորհեցաւ թէ ինք եր-
կրին չէր պատկանէր միայն բայց աստղին ևս,
վասնզի քրոջը հրեշտակը գացած էր առաջ:

Օր մը մանկիկ մը ծնաւ տղեկին եղբայրը ըլ-
լալու համար, և մանկիկը այնչափ պղտիկ էր որ
տակաւին բառ մը իսկ չէր խօսած, տարածեց իր
մանրիկ կերպարանքը իր անկողնին վրայ և մե-
ռաւ:

Տղեկը զարձեալ երազեց բացուած աստղը և
հրեշտակներու ընկերութիւնը, և մարդերու կա-
րաւանը, և հրեշտակներու զօրքերը իրենց շո-
ղափայլ աչքերով բոլորն ալ զարձած այդ մար-
դերու ղէմքերուն:

Տղեկին քրոջ հրեշտակը ըսաւ առաջնորդին
«Եղբայրս եկա՞ծ է»:

Եւ ան ըսաւ «Ո՛չ այն մէկը
բայց ուրիշ մը»:

Երբ տղեկը տեսաւ իր եղբօր
հրեշտակը քրոջ բազմութեան մէջ, գոչեց ան.
«Ո՛հ քոյր իմ ես հոս եմ առ տար դիս»:

Եւ նա
զարձաւ և ժպտեցաւ անոր վրայ, — և աստղը

կը փայլէր: Տղեկը մեծցաւ երիտասարդ զարծաւ, և կ'զբաղէր իր զօքքերով երբ ձերբունի ապաստար մը եկաւ և ըսաւ. «Մայրդ ոչ ևս է», եւ կը ընդերմ իր օրհնութիւնը իր սիրունած զաւակին:

Դարձեալ գիշերը ան անտաւ աստղը, և այդ ամբողջ Նախկին ընկերութիւնը: Ըսաւ իր քրոջ հրեշտակը առաջնորդին. «Եղբայրս եկած է», և ան ըսաւ — «մայրդ»:

Ընծախեան ուժգին աղաղակ մը արձակուեցաւ ամբողջ աստղերու մէջէն, վասնզի մայրը միացած էր իր երկու զաւակներուն. և անիկա առարածեց իր բազուկը և գոչեց. «Յ՛, մայր իմ, քոյր իմ և եղբայր իմ, հոս եմ ես, առէք տաբէք զիս»:

Եւ անոնք պատասխանեցին անոր. «Ի՞նչ ո՛չ», և աստղը կը փայլէր:

Մեծցաւ ան և մայրը եղաւ, սրուն մազերը սոխտակացան և ան կը ջնասէր իր անիւսին վրայ վառարանին մօտիկը ծանրացած վշտով, ու ղէմքը ցօլուած արցունքներով, կըր աստղը անգամ մը ևս բացուեցաւ:

Ըսաւ քրոջ հրեշտակը առաջնորդին. «Եղբայրս եկած է»: Եւ ան ըսաւ. «Ո՛չ, բայց իր կոյտ աղ-

թաղմ. Անգղ. ԶԱԲԷՆ ԱՐԱՆՈՅ

ջիկը»: Եւ մարդը որ Նախապէս տղեկը եղած էր հոնաւ իր դուստրը նոր կորսնցուցած իրեն հաւմար երկնային էակ մը այդ երեքին մէջ, և ըսաւ ան «Աղջկանս գլուխը քրոջ» կուրծքին վրայ է և իր բազուկը պլուած մօրս պարանոցին, և անոր օտքերուն երբեմնի մանկիկը եւ ինչպէ՛ս տոկամ բաժնուելու անկէ, Օրհնեալ ըլլայ Աստուած» — և աստղը կը փայլէր:

Այսպէս տղեկը ձերբունի մարդ զարծաւ և երբեմնի ողորկ ղէմքը կնճռատեցաւ, և իր քայլերը զողոթն և սկար էին, և իր քամակը կուրացած: Գիշեր մը երբ ան կը պառկէր իր անկողնին վրայ, շուրջը իր մանուկները կեցած ան լացաւ ինչպէս լացած էր երկուր բամանակ առաջ «կը տեսնեմ աստղը», իրարու փոփոսցին անոնք «կը մեռնի», և ան ըսաւ «Այո կը մեռնիմ ճարիքս կ'իյնայ ինձմէ նման զգեստի մը, և ես առաջ կը շարժիմ ղէպի աստղը տղեկի մը պէս: Եւ ո՛չ հայր իմ, կը գոհանամ քեզմէ որ այն աստղը այնքան յաճախ բացաւ ընդունելու համար այն սիրելիները որոնք զիս կ'սպասեն»:

Եւ աստղը կը փայլէր: Եւ կը փայլի իր զերեզմանին վրայ:

CHARLES DICKENS

«ԺԱՌՈՎԵՑԵՔ ԶՆՇԽԱՐԵԱԼ ԲԵՅՈՐՍԷ ԶԻ ՄԻԿ ԻՆՉ ԿՈՐԻՑԵ՛»

Խարայինի Հոգեւոր Հովիւ Տ. Ասողիկ Վարդապետ Ս. Պատրիարքին ազգած օտարոյն Նոյեմբեր 10 նամակով, ի միջի այլոց, կը գրէ.

«Աշխարհի արդի բազմաթիւն ու անհասկանալի ազգացներ կ'եղեակայեմ քէ որքան ծանրօրէն կը հնգեն հաւե Ս. Սրբոյն Եղեմեցի եւ այլ կաթելութեանց վրայ, որմէ կը առաջի համայն մարդկութիւնը ամենաւերջ, և մանաւանդ Ներսիսայի սրբին վրայ արդէն իսկ ծայր եռած անաւոր պատերազմին արհաւիրք, որ կը պատճառ հարակից ամբողջ աշխարհի վրայ, կը ջլատեն մարդոց յառաջնորդները եւ աշխատեալ կարողութիւնները եւ եռանքը, մարդոց կեանքը վաղուան անստուգութեան եւ անապահովութեան առջեւ դնելով:

Ինչպէսզոյն Արեւելք, ուր արդէն աւելի քան երկու տարի առաջ ծայր տուած էր Զինեմարեան անվերջանալի պատերազմը, այժմ հարիւրներ աւելի պայծառ չէ, այնպէս որ այլեւս կը գգուեամք շարունակական համաբարդութիւններէ: Միայնիս երբ Շանկիայ էի, տեղոյն ազգայինները զգացողիցն ինձի Շանկիայի համար առանձին հոգեւորականի պէտք. վասնզի այսօր հեռաւոր Արեւելքի Հայ գաղութին կարեւոր մէկ մասը հոն ծաւառած է աւելի քան 300 հոգի: Կը պատահին յանախ անակրկալ դժբախտութիւններ, մահեր, և ես չեմ կարող ժամանակին հասնիլ, վասնզի բաւական հեռու է: Գտանչար ժամ ցամաքով, բառաստուծ ժամ ալ ծովով պիտի համարեղմ հոն հասնելու համար, և երբեմն ալ երկու օր նաւու պէտք է սպասել, որ անպատեհութեանց առջեւ կը դնէ զմեզ և տխրաւով կ'ըլլան Ռուսաց դիմել: Այս կերպով մեր ժողովուրդը կը ստուի իր եկեղեցիէն և կը յարի Ռուսաց կամ Լաթինաց, ինչ որ ցաւալի է:

Շանկիայի Հայութիւնը այսօր բաւական կազմակեր-

պուած է շնորհիւ Տիար Հայկ Ասատուրեանի ազնիւ ու ազգասէր հայորդիի նշարական եւ բարոյական մեծ ջանքերուն և կորովի աշխատութեանց: Ունին վարձու տուն մը, որու մէկ մասը իբր աղօթարան կը ծառայէ, իսկ մնացածը իբր աղօթք: Մեծ ու փոքր միւս հոն կը համախմբուին, երիտասարդները ամէն օր, իսկ տղեցները զանազան առիթներով: Շանկիայի մէջ սեպական մասունք մը ունենալը ընդհանուրին փափանք է, և առաջին կարգի խնդիրներէն է, եթէ հոն անակրկալ դժբախտութիւններ չկան խանգարել: Շանկիայի Հայեր կազմած են Բաւրեգորական Միութիւն մը, որուն անդամագրուած են ի վիճակի եղող գաղութին բոլոր անդամները եւ կը վճարեն իրենց անդամատուր կանոնադրապէս: Այդ Միութեան մեջնջեմական նախագահն է Նոյեմբերն Տիար Հայկ Ասատուրեանը: Իրաց այս յուսադրի վիճակին մէջ անհրաժեշտ կը դառնայ հաւե կրօնականի մըն ալ պէտք, որպէսզի բաշխուի անոնց ազգօգուտ ձեռնարկները, արժարժե անոնց մէջ էիջ մը քմած ազգային ոգին եւ Հայ եկեղեցւոյ սէրն ու բարեբար դերը անոնց կեանքին մէջ:

Հոգեւորական մը եւս ունենալը այս կողմերը ունի հաւե այն անհրաժեշտութիւնը, որ դժբախտութեան մը պարագային, հիւանդութեան կամ մահուան, խրատ օգնութեան կը փութան, վասնզի մինչեւ Հնդկաստանի կղզիները, որ 10-12 օրուան համալսարն է, Հայ կրօնական զօնը դժուար է, և իմ նախորդ Խարայինի Տէր Եղիշէ Բահանան Ռուսաց ձեռով բաղուած է Ռուսերու կողմէ: Թարմ է ասկալին Տիար յիշատակը վերալիշեալ պարագաներէն մէկուն: Մօտ երկու ամիս առաջ վայնաճած է ի Շանկիայ յայտնի ընտանիքի գտակ Տիար Սեդրակ Ժամհարեանը: Թաղման չկրցի երթալ դժբախտաբար վերալիշեալ պատեհութեան, ինչ որ ինձի մեծ ցաւ մը պատճառեց սրբի, այդպիսի յայտնի ազգայինի մը քաղման կարգը օտարեմու վիճակուելուն համար: Ի մօտը երբ Շանկիայ երթալ, այդ մասին հարկ եղածը պիտի ջանամ կարգադրել տեղոյն ազգայիններուն հետ Տիար Օգնութեամբ, և պիտի տեղեկագրեմ Ձեր Բարձր Սրբազնութեան»: